



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2032

Նաճ «Ա.ՌՈՂՋԱՊՈՀԻԿ ԹԵՐԹ»-ի

ԲԺ. ՎԱՐԴԱ ՄՐԾՐՈՒՄ

ԲԱՅ ԶՐԱՅՑԱՐ

ՎԱՏ 8ԱԻ

ԿԱՄ

ՍԻՖԻԼԻՍ

19 նկարով

Երկրորդ բարեփոխուած  
հրատարակութիւն

616.957

Կ - 88

№

1903

ԱռԱՆՁԻՆ - ԳԻՆՆ և 20 ԿՈՊ.

616.957 սր'

8 JUL 2010

ԲԺ. ՎԱՀԱՆ ՄՐԾՐՈՒՏԱ

# ԹԱՅԱՐԱՎՈՅՑ

Վ.Ա.Տ ՑԱՀ

610 ԿԱՄ  
24-ԱՐ ՍԻԹԻԼԻՍ

19 Նկարով

Երկրորդ բարեփոխուած  
իրատարակութիւն

№ 9

1903

ԹԻՖԼԻԶ

Տպարան Վ. Մագ Հրատ. Բնկ. || Տիպօգ. Գրադ. Խալ. Երևան

**ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ**

«ՎԱՏ ՑԱՀ» գրքոյիկի առաջին տպագրութիւնը վաղուց սպասուած լինելով, պահանջ կար մի նոր հրատարակութեան: Ուշանալու պատճառն այն էր, որ ցանկանում էինք բարեփոխել նրան, լրացնել և աւելի մեծ քանակութեամբ նկարներ գետեղել մէջը: Այս գրուածքը բաժանուած ենք երկու մասի. ներկայ հրատարակուած մասում մենք՝ խօսուած ենք ստացական սիֆիլիսի մասին, իսկ հետեւալ երկրորդ մասը (որը տպագրուած չի եղած ու բոլորովին նոր է) պէտք է նուիրուած լինի Ժառանգական սիֆիլիսին, այսինքն. սիֆիլիսուից ծագած սերունդի հիւանդութիւններին ու արատներին:

**Ա. Արծրունի**

1 սեպտ. 1903 թ.

Дозволено цензурою. Тифлисъ, 5 сентября 1903 года.

# ՎԱՏ ՑԱՒ ԿԱՄ ՍԻՅԻԼԻՍ

ՄԸՆԿՐԱՆ  
ՄԸՆԿՐԱՆ

## ՄՏԱՅԱԿԱՆ ՍԻՅԻԼԻՍ

Ո՞վ չի լսել վաս ցաւի կամ սի-  
քիլիսի անունը. Ո՞վ չգիտէ, թէ ի՞նչ  
ահազին վնասներ է հասցնում նա մար-  
դուս, ի՞նչպէս անբաղդացնում է նա թէ  
հիւանդին եւ թէ նրա ընտանիքը:

Շատ բանուոր ձեռներ աշխատանից  
կտրել է վաս ցաւը, շատերին գերեզման է  
տարել ու շատ ընտանիքներ բաղցած բողել:

Ցաւն այն է, որ մարդիկ չեն հասկա-  
նում, թէ ինչից է առաջ գալիս այս հի-  
ւանդութիւնը եւ ինչպէս պէտք է պահպա-  
նեն իրանց, որ չիւանդանան:

Այս գիրքը գրուած է հէնց նրա համար,  
որ մարդիկ ծանօթանան այդ սարսափելի  
հիւանդութեան հետ, որպէս զի զգուշանան  
նրանից եւ չփչացնեն իրանց կեանիքը:

Ա. Ի՞՞նՉ է ՎԱՏ ՑԱՀԱՅ ԿԱՄ ՍԻՅԻԼԻՍՐ

Վատ ցաւը կամ սիմիլիսը մի վարակիչ  
հիւանդութիւն է, այսինքն այնպիսի ցաւ,  
որը հիւանդից անցնում է առողջին։

Դատերը կարծում են, թէ վատ ցաւը  
կարելի է ստանալ միայն վատ բարքի տէր  
կանանցից և թէ այդ ցաւն ունեցողները ան-  
բարոյական մարդիկ են։ Ոյդ է պատճառը,  
որ սիֆիլիսը ամօթալի ցաւ է համարւում  
և հիւանդացողն ամաչում է մէկին իր ցաւը  
յայտնել, նոյն իսկ բժշկին չի հաւատում իր  
գաղտնիքը, որովհետեւ վախումէ, չինի թէ  
նա գնայ ուրիշներին պատմի ու խայտառա-  
կի իրան։

Սրանից մեծ վնաս է համում թէ իրան  
հիւանդին, թէ նրա հետ ապրողին և թէ  
նրա հետ որ և է յարակցութիւն ունե-  
ցողին։

Հիւանդին հասած վնասն այն է, որ  
նա ծածկում է իր ցաւը ու չի բժշկում,

իսկ չբժշկուած սիֆիլիսը սարսափելի հետեւանքներ ունի, ինչպէս կտեսնենք յետոյ: Հիւանդի մօտի մարդիկն էլ զիասում են նրանով, որ վարակում են:

Բայց որչափ սխալվում է, ով կարծում է, թէ վատ ցաւ միայն անառակ կանանցից կարելի է ստանալ: Բաս ինչպէս է, որ պսակուած համեստ կնանիքն էլ, ծերունիներն էլ, երեխաներն էլ, նոյն իսկ ծծկեր եւրեխաները ևս հիւանդանում են այդ ցաւով, Տեսնենք, թէ ինչպէս է լինում այդ վարակումն:

### Բ. Ի՞նՉՊԵՍ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՎԱՏ ՅԱՀ ՍՏԱՆՈՒՄԸ

Մարդ այդ հիւանդութիւնն ստանում է այն ժամանակ վիայն, երբ հիւանդի խոցերի կամ ջրցուկների քարախն ընկնում է առողջ մարդու մասկի (կառու) կամ քանանքի վրա \*), եւ երէ սրանց վրա որ եւ է

\*) Թաղանքը կոչում է ներքնամաշկը, ալսինքն այն բարակ կաշին, որը սկսում է շրթունքներից և պատում բերանը, բոզը, ստամոքսը, աղիքները մինչև նրանը (նստատեղին), Թաղանթը պատում է նոյնպէս աչքի գունդը և սեռական զործարանները: Նրան ուրիշ անուններ էլ

ենրծուածք, նեղուածք կամ վերք կայ: Իսկ այսպիսի մանր քերծուածքներ ու պատրուուածքներ համարեա միշտ կան մեր շրթունքների վրա, բերանի մէջ և սեռական գործարանների վրա:

Սիֆիլիսի խոցերից թարախն ընկնում է այս աննշմարելի վերքերի վրա, ծծւում է և տարածուում մեր ամբողջ մարմնի մէջ ու հիւանդացնում մեղ, որովհետեւ այս թարախի մէջ, ինչպէս ասել ենք, վատ ցաւի թոյն կայ:

Վարակումն լինում է երկու տեսակ. կամ ուղակի հիւանդից, կամ մի որ եւ է առարկայի միջոցով, որը հիւանդը գործածելիս է եղել և որի վրա իր խոցերի թարախից քսել է:

Ճշմարիտ է, ամենից հեշտ կերպով մարդիկ ստանում են այս ցաւը, երբ հիւանդ կնկայ հետ գործ են ունենում, կնանիքն էլ—երբ հիւանդ տղամարդու հետ են յարաբերութիւն ունենում:

Բայց շատ ուրիշ ձևերով էլ կարելի է վարակուել:

Են տալիս. լորձաթաղանթ (որովհետեւ լորձունք է արտադրում), հուղաթաղանթ և որից

Ահա մի բանի օրինակ.

1. Եթէ հիւանդը (տղամարդ թէ կին,

այդ միենոյն է) խոց ունի շրթունքների վրա, կամ ջրջրուկ, կամ մի որ և է թարախոտած ցան (գուրս տուած), նա կարող է ուրիշն իր ցաւը տալ համբոյրի միջոցով, որովհետեւ համբուրելիս հիւանդը իր խոցերը քսում է առողջի շրթունքներին (պոօշներին) և նրանց վրա թողնում վարակիչ թոյշնը Ամենքը գիտեն, թէ ինչ հեշտութիւնով համբուրում են մարդիկ, մանաւանդ եթէ մի քիչ արբած են, որովհետեւ արբածները յաճախ «ախպրանում են» իրար հետ:

Ամեն մարդու, որը ձեր տունն է մրտանում, գուք թոյլ էք տալիս գրկել, համբուրել ձեր երեխային: Ի՞նչ սարսափելի բան կինի, եթէ նրանցից մէկի բերանի մէջ խոցեր կան և նրա թուքը թունաւորուած է: Չէ որ նա կվարակի ձեր փոքրիկին: իսկ երբ սա հիւանդանայ, չէ որ ձեր միւս երեխաներն էլ, ձեր կինն էլ, գուք ինքներդ էլ կվարակուեք:

2. Հիւանդ ծնողների երեխան դեռ մօր փորումն է վարակում ու հիւանդ ծընում:

3. Միփիխոս պառաւ կանայք կարող

են վարակել, երբ լեզուով ուրիշի աչքից աւազ կամ չոփ են համում, կամ երբ թուք են քսում ուրիշի աչքին, իբր թէ բժշկելու համար:

4. Յաճախ գիւղերում ծծմայրերը ծըծում են ծննդկանի պառւկները և, եթէ բերանում խոցեր ունեն, կարող են այդպիսով խեղճ ծննդկանին վարակել: Այդ գէպքում առաջին խոցը գուրս կգայ ծծի պըտուկի վրա:

5. Յատ կանայք հիւանդանում են, երբ ծիծ են տալիս վատ ցաւ ունեցող մի երեխայի, որի բերանի մէջ կամ շրթունքների վրա սիֆիխսական ջրջրուկ կայ: Այդ գէպքում ևս առաջին խոցը գուրս է գալիս ծծի պտուկի վրա:

6. Ընդհակառակն էլ է շատ պատահում: այսինքն ծծմայրն է հիւանդ լինում: այն ժամանակ երեխան է վարակւում: Այս գէպքում էլ երեխայի վարակումն տեղի է ունենում կամ համբոյրի միջոցով կամ ուղղակի ծիծը բերանն առնելիս, որովհետեւ երբեմն պտուկի վրա էլ վարակիչ խոցեր են լինում:

Վարակուելը, ինչպէս ասել ենք, լինում է նոյնպէս մի որ և է բանի միջոցով:

7. Հիւանդի վրաի թոյնը քսուած-ըն-  
կած է լինում մի առարկայի վրա (օր. հա-  
գուստի, բաժակի, դդալի, սրբիչի) ու, երբ  
մի ուրիշը գործ է ածում այդ իրը,  
թոյնը քսուում է նրան ու կարող է վարա-  
կել (օր. երբ հիւանդի բաժակով ջուր են  
խմում; կամ նրա հագուստը հագնում; նրա  
երեսարբիչն ու գոգնոցը գործ ածում և  
այլն): Հատ ճաշարաններում բանուորները  
միւնոյն ամանից, երբեմն էլ հէնց միւնոյն  
դդալով են ուտում փոխէփոխ, միւնոյն բա-  
ժակով թէյ, գինի, արաղ խմում: Եթէ այդ  
բանուորներից մէկը վարակուած լինի, կա-  
րող է միւսներին էլ վնասել:

8. Կարելի է հիւանդանալ նոյնպէս և  
դայլանի, մուշտուկի, ծխախոտի միջով, երբ  
փոխէփոխ են ծխում:

9. Մի արհեստանոցի մէջ մի հիւանդ  
կին միւս բանուոր աղջիկների հետ միասին  
էր հաց ուտում:—մի քանի օրվայ մէջ նրան-  
ցից վարակուեցին երեք 14—15 տ. աղ-  
ջիկ:

10. Մի ուրիշ աղջիկ տօներին իր ըն-  
կերուհու սպիտակեղէնները հագել էր ու  
վարակուել:

Այդպիսի դէպքեր շատ են պատահում:

Արհեստանոցներում բանուորները ու-  
րիշ տեսակ էլ են վատ ցաւ ստանում:

11. Օրինակ. գուրզարները (հիւաները)  
բանելիս մեխեր են դնում բերանները և  
անպէտքները կամ չբանացրածները դար-  
ձեալ ետ գցում մեխերի արկղիկի մէջ: Նրա-  
զից յետոյ մի ուրիշ բանուոր այդ մեխերը  
իր բերանն է առնում, և եթէ առաջին  
բանուորը հիւանդ է եղած, ինքն էլ է վա-  
րակում: Դերձակները, կար անող կանայք  
նոյնպէս վերցնում են, բերաններում պա-  
հում զանազան կոճակներ, չանդալ-օղակներ,  
քորոցներ և այլն ու դարձեալ վայր գցում  
արկղիկի մէջ. այսպիսով քիչ մարդ չի վա-  
րակուում:

12. Նոյնն են անում կօշկակարները ի-  
րանց փայտէ մեխերը բանացնելիս,

13. Եղել են դէպքեր, որ մի ուրիշի  
գոգնոցով աչքերը սրբել են ու վարակուել.  
այս դէպքում առաջին խոցը աչքի կոպերի  
վրա է դուրս դալիս:

14. Բաղնիսներում լողացողներից շա-  
տերը իրանց հետ սրբիչ չեն տանում, այլ  
բաղնիսպանից են վերցնում: Էլ չեն մտա-  
ծում, թէ կարող է կեղաստ լինել:

15. Պուք ծառայ էք վարձում և չէք

Հարցնում։ առնդյ է նա թէ ոչ։ Հիմի երեակայեցէք, որ ձեր խոհարարը հիւանդ է. չէ որ նա ամանների, կերակրի հետ միշտ կարող է վարակել ձեզ ու ձեր ընտանիքը։

Ո՞րչափ դդոյշ պէտք է լինի մարդ։  
16. Բաղնիսում նստում էք մի նստաւանի վրա, որի վրա ձեզնից առաջ մի հիւանդ մարդ է նստած եղել, և դուք էլ հիւանդնում էք։ Նոյնը կարող է պատահել և արտաքնոցներում։

17. Զեր լուացարարը հիւանդ է ու ձեր շապկի, կամ երեսսրբիչի վրա թոյն է քսուել. — վարակումն պատրաստ է!

18. Դուք առնում էք-տուն բերում ձեր երեխայի համար մի որ և է խաղալիք, որը մի հիւանդ երեխայ մի քիչ առաջ բերանն է տարած եղել, — ձեր երեխան կարող է նրանով վարակուել, որովհետեւ այդ խաղալիքի վրա կարող էր թոյն մնացած լինել։

Անհնար է մի առ մի յիշել այստեղ այն բոլոր դէպքերը, երբ մարդ կարող է վարակուել. բաւականանաք առաջ բերած ներով։

Գ. Ի՞՞նչ գովել է Սիթիլիսը Գիկղերը ՄՏՆՈՒՄ

Գիւղացի տղամարդիկ քաղաքներում ստանում են այս ցաւը և վերառնալով գիւղ, ամենից առաջ, ի հարկէ, իրանց կնոջն ու երեխաներին են վարակում, յետոյ իրանց ծանօթներին ու ազգականներին, և այսպիսով ցաւը տարածւում է գիւղի մէջ։

Հիւանդութիւնը գիւղն են բերում նոյնակէս և զինուորները, երբեմն էլ գիւղացի կանայք, որոնք գնացել էին քաղաք ծծմայրութիւն անելու, կամ տներում ծառայելու և այնտեղ հիւանդացել։

Բաւական է, որ մի անարատ գիւղում մի-երկու սիֆիլիսոտ մտնեն, — կարճ ժամանակում գիւղի մի մասը կամ հէնց ամբողջ գիւղը կարող է վարակուել, որովհետեւ գիւղացիք բոլորը միմեանց ազգական ու բարեկամ են, շատ մօտ են իրար, միշտ աման-չաման են տալիս-առնում, մի ամանից ուտում, միասին քէփեր անում, համբուրում և այլն։ Այն էլ ասենք, որ գիւղացիք չեն ճանաչում այդ հիւանդութիւնը և ու ըեմն իսկի չեն էլ զգուշանում նրանից։

Դ. ԽԵՂ ԵՆ ՎԱՏ ՑԱԽԻ ՆՇԱՆԵՐԸ

Վարակուելուց (այսինքն թոյնը մի տեղ գիտչելուց) մի քանի շաբաթ անցած, այն տեղում, որտեղ թոյնը ընկել է, դուրս է դալիս ոսպի մեծութեամբ խոցիկ։ Այդ խոցիկը երբեմն բաւականին մեծ է լինում, երբեմն էլ ընդհակառակը այնքան փոքր, որ հիւանդն իսկի չի էլ նկատում։ Խոցը չի ցաւում, շատ քիչ թարախ է արտադրում, մսի գոյն ունի, փայլում է և կարծր (պինդ) արմատ ունի։ (Եթէ երկու մատով շօշափէք, այնպէս կթուի թէ կլոր կոճակ է)։ Այդ է պատճառը, որ նրա անունը կարծր կամ պինդ (ամուր) շանկը են դրել։ Մաքուր պահելուց և բժշկի գեղերով նա շուտով անցնում է, իսկ եթէ կեղտոտ է պահւում, կարող է շատ մեծանալ, տարածուել ու այն ժամանակ աւելի դժուար կլինի նրան բժշկելու։

Դա սկզբնական կամ առաջին խոցին է (կարծութան կամ)։

Սա կարող է գոյանալ մարդուս մարմնի  
որ տեղի ասես։ Սեռական յարաբերութեան  
միջոցին նա դուրս կգայ սեռական բասերի

վրա։ Եթէ վարակումն համբոյրի կամ որ  
և է առարկայի միջով է եղել, խոցը դուրս  
կդայ պոչշների (տ. նկ. 1), լեզուի վրա


Եկ. 1



Սիմեոն Խոստիկ վերին շրթունքի վրա  
համբայրից:

(տ. նկ. 2 և 3) կամ բգի մէջ (ըմպանի վրա)՝ վերև ասացինք, որ նա կարող է երեալ աչքի կոպերի, կնոջ ծծերի (տ. նկ.

4 և 5), վէրքերի վրա. մի խօսքով—ամեն  
տեղ (ա. նկ.  
6 և 7):



Նկ. 2. (վերկինը) Սիֆիլիսական  
շանկը, որը երեխան ստացել է  
վարակուած ծիծ ձձելիս:

Նկ. 3. (ներքեմինը) Բորբոքուած  
շանկը լեզուի վրա:

բոնք աճուկի ծակքում շարան են կազմում  
(տէրողորմեակի նման): Զարմանալին այն է, որ  
սրանք կը շանկի պէս չեն ցաւում. Արանք

Այդ խոցի  
բարախը խիս  
վարակիչ զօ-  
րուքին ունի:  
Ուրեմն այս  
խոցն ունեցո-  
ղը իրաւունք  
չունի իր կնո-  
ջը (և առհա-  
սարակ ոչ ոքի)  
մօտենալ:

Խլերը: Խոցի  
երկալուց եր-  
կու-երեք շա-  
բաթ անց, խո-  
ցից վեր, կաշու  
տակ սկսում  
են շօշափուել  
մանր կարծ  
գնդակիներ, ո-  
ւ


սիֆիլիսական խլերն են: Եթէ շանկը սե-  
ռական մասերի վրա է, այդ խլերը աճուկ-  
ներումն են եւ  
բեռում, եթէ

Նկ. 4.

Տրթուների  
վրա է կամբգի  
մէջ, ուռչում  
են ծնոտի տա-  
կի խլերը և  
այլն:

Այս խլերի սիֆ. շանկը ձձի պտուկից վրա,  
երեւալը նշան  
է, որ բոյնը արդէն մտել է արեան մէջ:

Նկ. 5.



Նոյնը բորբոքուած:

Վերջանում է, և յանկարծ դուրս են ընկ-

Բայց հի-  
ւանդութիւ-  
նը գրանով  
չի վերջա-  
նում: ։  
Վարակման  
օրից անց-  
նում է 5-6  
շաբաթ (եր-  
բեմն էլ ա-  
ւելի), խոցը  
լաւանում:

Նում հիւանդութեան նոր երեսյթներ (նըշաններ): Այսպէս, մարմնի վրա երեսմ են զանազան ցաներ (գուրս տուածներ), որոնք կամ չոր վարդագոյն հասարակ բծեր


Ակ. 6.



Քորբոքուած շանկը ծնօտի վրա:

Ակ. 7.


Են, կամ թարխակալած բօժիկներ ու խոցիկներ (տ. նկար 8, 9, 10 և 11), թետոյ խոցեր են գուրս գալիս բերանի մէջ (տ. նկ. 12), բգի մէջ (տ. նկ. 13), սեռական գործարաններ վրա, ետքում, —սրանք արտադրում են



Կարծր շանկը ծնօտի վրա:

թարախային հեղուկ, որը ոկզբնական խոցի թարախի նման զօրեղ վարակիչ ոյժ ունի:

Ակ. 8.




Բշտիկացին սիֆիլիտական ցան (գուրս տուած), որը ծածկել է զէմքը, զլուխը և ամբողջ մարմնը:

Այս ժամանակ խոցեր ու ցաւեր գուրս են տալիս նոյնպէս և կոկորդի մէջ, ու ձայնը

Խոպոտում է, նոյն իսկ կտրւում: Յետոյ մազերը թափւում են, թափւում են նոյնպէս և յօնքերը, արտեանունքը (թարթափները),

Նկ. 9.



Սիֆիլիսական հանգուցներ կամ պղոկներ (պապուլներ), որով ծածկուած է ամբողջ մարմինը:

Դա կախուած է սիֆիլիսական թոյնի ոյժից և հիւանդի դիմացկոտութիւնից:

Եղունկները  
փթում են ու  
վայր ընկնում  
երբեմն էլ աշ-  
քերն են ցա-  
ռում (տ. նկ.  
8):


Նկարագրած ախտանշանները բոլորը, ի հարկէ, ան-  
պատճառ չը-  
պէտք է երեան  
ամեն հիւանդի  
վրա: Այսինչ հի-  
ւանդի վրակա-  
րող են երեալ  
այս ինչ նշան-  
ները միայն, մի-

ուրիշի վրա ու-  
րիշ նշաններ:

Այս միջոցին վարակիչ թոյնը գտնուում է համ հիւանդի թքի, համ էլ նրա արեան մէջ և հիւանդը շատ զգոյշ պէտք է լինի,  
որ ուրիշներին չի-  
ւանդացնի: Եթէ հիւ-  
անդը իսկոյն բժշկի  
դիմի ու սկսի բը-  
յշկուել, նա կարող է բոլորովին առող-  
ջանալ: Առհասարակ  
հէնց որ մի բան եւ-  
րեաց վրան (խոց,  
պղուկներ և այլն),  
նա իսկոյն պէտք է  
բժշկին դիմի:


Չպէտք է մոռա-  
նալ, որ այսպիսի  
բաներ ամեն բոսէ  
կարող են երեալ:  
Եւ յիրաւի, հիւան-  
դութիւնը միանգա-  
մից չի վերջա-  
նում, այլ մի քանի ժամանակ (2—3 ամիս)

թագնուած է միում և նորից երեսում: Ուրեմն  
հիւանդը միշտ պէտք է զգոյշ մնա ու իր  
վրա հսկի, էլ չասի թէ. «Էհ, պղուկ է, էլ,




կանց կենաց։ Եթէ ականջ չդնի ու չբժշկուի,

Նկ. 11.



Բուսող մաշկալին սիֆիլիտալին հանդուցներ զիսի վրա  
մազերի մէջ, կոչամ է նոյնպէս սիֆիլիտալին մորին  
այն ժամանակ հիւանդութիւնը քանի գնա,  
կարմատանայ։

Նկ. 12.



Ոտի տակի սիֆիլիտական պաօրիազիս

Այն ժամանակ մարմնի զանազան տես-  
ղերում կերևան կարմրաւուն պղուկներ,  
որոնք կլարախակալեն, կծակուեն ու կդառ-  
նան խոցեր։ Յետոյ ոսկորները կուռչեն—  
կփռեն, կխո-  
ցուռուեն ու կը-

Նկ. 13.

տոր-կտոր


դուրս կդան  
կաշու տակից։  
Միևնոյն ժա-  
մանակ ցաւը  
կլնկնի քիթը,  
կսկսուի սաս-

տիկ գարշահոտ նկարը ներկայացնում է բացուած  
հարբուխ, քթի բերան, քիթքի վրա և աւելի խոր-  
մէջ վերքեր կը-  
քում նկատում են խոցեր։  
Պոյանան, պիտեղից արնախառն թարախ կհո-



սի, ու դրա հետ գուրս կդան փտած ոսկորների կտորներ (տ. նկ. 17): Վերջապէս քիթը կըլի (տ. նկ. 18), քիմքը կծակուի, և հիւանդը այլես անկարող կլինի պարզ խօսել ու կանոնաւոր կերպով մնունդ առաջ.

Նկ. 14.



Բաց բերան բգի միջի խոցերով, ժամանակ բանն այն տեղ է համառմ, որ հիւանդը հազիւ կարողանում է փսփսալով խօսել (տ. նկ. 19):

Ոտերի, թերի, գլխի ոսկորները սարսափելի կերպով ցաւում են ու հանդիսան չեն տալիս խեղճին, մանաւանդ դիշերները անկողնու մէջ:


Պատահում է, որ հիւանդը գժուարու-

թիւնով է ձեռներն ու ոտները շարժում, որովհետեւ յօդերը (խաղերը) հիւանդանում են, նրանց վրա խոցեր են գուրս դալիս, լինում են և

այնպիսի դէպւ

Նկ. 15.

քեր, որ վատ ցաւ ունեցող հիւանդը կուրանումէ, խըշ լանում, խելագար դառնում: Նրա ներսը զանազան խուլեր, ուռուցքներ ու խոցեր են գոյանում և ուրիշ շատ տեսակ հիւանդութիւններ առաջ գալիս: Հիւանդը նիհարում է, չորանում և վերջապէս սարսափելի տանձնակների մէջ



Վիֆիլիսական խոր խոցեր աղլորի վրա (բուպիս):

Որքան էլ սարսափելի լինեն մինչեւ այժմ նկարագրած ցաւերը, աւելի ևս զարհուրելի է հիւանդի դրութիւնը, երբ վատ ցաւը

Դեպչում է ուղեղին ու ողնուղեղին (ողնաշարի ուղեղին)։

Նկ. 16.



Սիֆիլիսական խոցեր ազդրի վաստ ջեռի վրա նկատում է՝ բթի եղունգը փաել է ու կերտում է, իսկ ցուցամատի և չորրորդ մատի եղունգները նոր են հիւանդացել։

Այդպէս ուրեմն, սիֆիլիսը ոչ մի մարմարաց չի խնայում։ Նա հարուածում է թէ երեսի մաշկը, թէ թաղանթները, թէ մկանները (մսերը), թէ ոսկորները և

թէ ներսի գործարանները։ Բայց նրա հասցրած մնասներից ամենազարհուրելին դլիմի մէջքի ուղեղին էրին հասցած մնասներն են<sup>\*)</sup>։

Ե. ՈՒՂԵՂԻ ՈՒ ՈՂՆՈՒՂԵՂԻ ՀԻՒԱՆԴՐԻ ԹԻՒՆՆԵՐԸ

Ուղեղը մեր խեթքի ու շարժողութեան կենդրոնն է։

Նրա ամեն մի

ակարութիւնը

ազդում է մեր բանականութեան ու շարժումների վրա։

Սիֆիլիսը յաճախ ընկնում

է ուղեղը ու

հիւանդացնում

նրա որ և է բթի սիֆիլիսական բորբոքումն, որից


մասը, և այն կերպում են բթի քափուկ ու ոսկրալին

ժամանակ հիւանդացները

և այնպէս կորցնում է զգացողութիւնը, և պա-


անդը կորցնում է զգացողութիւնը, և պա-

անդը մանրամասն մեր „Սիֆիլիս“, սակուղ շանկը և սուսունակ՝ զրգուկը։



Նկ. 17.

տահում են բաղմաթիւ ու զանազան խանգարումներ նրա թէ բանականութեան և  
Ակ. 18.



Քթի սիֆիլիսական բորբոքում,  
որից քիթը արդէն ըլել է ու  
ճպկուել:

Ի՞ է դառնում: Այն մարդը, որը պէտք  
է աշխատէր, իրան ու իր ընտանիքը կերակրէր, այժմ ընկել է անկողին, ան-

կարող է ոչ ձեռը շարժել և ոչ ոտք, ու  
մի ծանր բեռ է դարձել իր ընտանիքի համար: Եւ այդ խանգարումների հետ միասին, կամ նրանցից անկախ կերպով, առաջ է դալիս առնական անկարողութիւն (հիւանդները

Ակ. 19.

ՊՐԻԿՈՒՄ ԵՆ  
«ՊՂԱՄԱՐԴՈՒ-  
ԹԻՒՆԻց» և ան-  
կարող են լի-  
նում սերունդ  
արտադրելու),

կուրութիւն ու սիֆիլիսալին խոցեր ու բո-  
խութիւն, մը-  
տառը ընդունակութիւնների պակասումն  
և, — որը ամենազարհուրելին է — լսելագա-  
րութիւն \*):

Մարդու վրա սարսուռ է ազգում, երբ  
նա դիտում է այդպիսի հիւանդներին ու  
ծանօթանում է դրանց ընտանիեկան անբաղ-  
դութիւնների հետ:

Ահա մի ջահէլ աղամարդ. նա անդա-  
մալոյծ է, բոթուկի նման վայր է ընկած-  
տանը, անտանելի ծանր բեռ դառած իր

\*) ՏԵ՛Կ ԲԺԿ. Յուղուղեանի „Աւեղի սիփիլիս“:



մնեցիների վղին, ընդմիշտ զրկուած աշխատելու կարողութիւնից, միշտ տրանջող ու գժոհ, իսկ կինը դատապարտուած տաժանակիր աշխատանքի, որ կարողանայ մի կը տոր հաց ճարել իր քաղցած ու մերկ մանրիկներին ու անպէտք դառած տղամարդուն:

Ահա մի ուրիշը, Մի բանի տարի է միայն, ինչ ամուսնացել է նա: Կինը դեղեցիկ է, երխոտասարդ: Առաջ խեղճը լաւ պարապմունք ուներ և ապահով ապրում էր, իսկ այժմ կուրացել է երկու աչքով, մնանկացել է և ծախսում է իր վերջին ռուբլիները և, ով գիտէ, թէ ինչ վիճակ է սպասում ապագայում նրան ու նրա ընտանիքին:

Ահա մի երրորդն էլ: Սա չլսեց բժշկի խորհրդին ու ամուսնացաւ: Իսկոյն վարակեց իր կիոյը—մի մատաղահաս դեղեցիկ աղջկայ, որը կուրօրէն հաւատացել էր նրան իր բաղդը, իր կեանքը: Այժմ նա խելագարուած է, իսկ ջահէլ կինը, սոսկալի ախտով վարակուած, անվերջ տանջանքներով քարշ է տալիս իր ցաւալի գոյութիւնը իր երկու մասուկների հետ միասին:

Այդպիսի գէպքերն անհաշի: Ի՞ն:

Սարսափելին այն է, որ ուղեղի հիւանդութիւններն ընդհանրապէս անբուժելի են. —այն գեղերը, որոնք բժշկում են սիֆիլիսի միւս արտայայտութիւնները, համարեա անզօր են ուղեղի ու ողնուղեղի հիւանդութեան դէմ!...

## Զ. Ի՞՞ՆՉՊԵՍ ՄԱՐԴ ՊէՏՔ է ՊԱՀՊԱՆԻ ԻՐԱՆ ՎԱՏ ՑԱՒԻՑ

Սիֆիլիսը այնքան տարածուած ախտ է, որ անզգոյց մարդը ամեն օր կարող է վարակուել:

Մենք տեսանք, որ սիֆիլիսի դլխաւոր աղբիւրը վատ բարքի տէր կանայքն են, որովհետեւ նրանք համարեա բոլորը հիւանդեն լինում այդ ցաւով: Մեր բանուորներն ու վաճառականները, որոնք ուրիշ երկիրներ են գնում, պէտք է շատ զգոյշ լինեն, զսպեն իրանց ու յարաբերութիւն չունենան կասկածելի կանանց հետ:

Նատերը չափազանց թեթև են նայում այս հիւանդութեան վրա, բայց մենք ցոյց տուեցինք, թէ որչափ սարսափելի են նրա

փասները։ Ուրեմն ամեն մէկը, որը սիրում է իր կեանքը և իր ապագայ երջանկութիւնը, պէտք է ժուժկալ մնայ։

Սւելորդ եմ համարում խօսել ամուսնացածների մասին。—Նրանք պէտք է սարսափեն այդ ցաւից, եթէ խղճում են իրանց ընտանիքը։

Սակայն, ինչպէս ասել ենք, մարդ կարող է վարակուել նոյնպէս և հիւանդի իրերի միջոցով։ Շատ վատ սովորութիւններ կան մեր մէջ։ Օրինակ, բանուրները մի ամանի միջից են ուստում-խմում, մի և նոյն գդալը փոխէփոխ բանեցնում, կամ իրար ձեռքից ծխախոտ ու դայլան վերցնում, կամ միւնոյն բաժակով խմում և այլն։ Այդպիսով, եթէ մէկը հիւանդ է, միւսներն էլ կարող են բռնուել այդ հիւանդութիւնով։ Ամեն բանուր անբատճառ պէտք է իր ամանը, իր գդալն ու բաժակն ունենայ, որոնց արժեքը մի քանի կոպէկ է և ամեն մարդ կարող է գնել։

Աշխատելիս էլ մարդ պէտք է զգոյշ լինի, ուրիշի բերանում եղած մեխերը կամ թեր իր բերանը չտանի և այլն։ Առհասարակ բերանը չդնի այնպիսի բաներ, որոնց վրա

կարող է ուրիշի թուք կամ թարախ ընկած լինել։

Յաւակցաբար ժողովութիւնը, այլև զարմանալի կերպով անուշադիր է դէպի իր սեփական ցաւերը։

Լինում են այնպիսի անզգոյշ ու անուշադիր մարդիկ, որոնք իսկի չեն էլ հասկանում թէ հիւանդ են։ Շատերը, թէև նկատում էլ են, որ խոցեր ու պզուկներ ունեն, բայց ուշք չեն դարձնում, որովհետեւ այդ «պատիկ բաները» չեն նեղացնում իրանց և չեն արդելում իրանց գործը շարունակելու և որովհետեւ նրանք յոյս ունեն, թէ «ինքն իրան կանցնի»։

Բայց ժամանակ է անց կենում, հիւանդութիւնը հնանում է, հաստատում է վրան, ու այն ժամանակ դէմքի, մարմնի վրա սկսում են երևալ զանազան խոցեր ու դուրս տուածներ, առաջ են գալիս յօդացաւեր, ուկրացաւեր, որոնք հանդիսաւ չեն տալիս խեղճին, ու սա սկսում է նիհարել և ուժերը կորցնել։

Եթէ այդ ժամանակն էլ նա անուշադիր է թողնում իր ցաւը, վրա են գալիս սիֆիլիսի երրորդ կարգի սոսկալի հետեանք։

ները, որոնք ամբողջովին քայլայում են խեղճի կաղմուածքը և հասցնում վերև նը-կարագրած ուղեղային և ողնուղեղային հի-ւանդութիւններին:

Այն ժամանակ միայն հիւանդը ուշքի է գալիս: Նա տեսնում է, որ յիրաւի հիւանդ է, առաջուայ նման չի կարող բանել և որ հարկաւոր է բժշկուել, որովհետեւ, եթէ այդպէս գնայ, նա պէտք է աշխատանքը կորցնի ու գերդաստանը քաղցած թողնի:

Նատերն էլ ամօթից թագցնում են իւրանց հիւանդութիւնը և չեն հասկանում, որ հիւանդանալն ամօթ չէ, — անբաղդութիւն ամեն մարդու կարող է պատահել: Հիւանդի տնեցիքն էլ պէտք է հասկանան այդ բանը և հիւանդի երեսովը չտան ու չհայհոյեն, այլ օգնեն նրան ամեն կերպ, որ բժշկուի: Այսպիսով թէ հիւանդին փրկած լինեն և թէ իրանց աղատած կլինեն վա-

ֆանի որ սիֆիլիսը անցնում, հիւանդը կարող օդի միջով չի հետ ապրել, բայց իր սպիտակեղենը, իր աման-չամանը, իր բաժակը, կը պէտք է առանձին պահչի, չափալ-դանա-գամ դործ ածելուց յետոյ եռման ջրով

լուսնայ, որովհետեւ այդպէս մաքրած իրեւրը անվնաս են դառնում:

Բայց չէ որ շրջապատողները յաճախ չգիտեն թէ այն մարդը, որի հետ գործ ունեն, շփում են, հիւանդ է: Ուրեմն սիֆիլիսոտը ինքը պէտք է այնքան խիզճ ունենայ, որ ուրիշների մեղքի տակը չընկնի:

Մեծ մեղք են անում այն հիւանդները, որոնք հասկանալով, թէ կարող են ուրիշներին վարակել, այնուամենայնիւ թագցնում են իրանց ցաւը, ելի ամենքի հետ նստում-կանգնում են, ուտում-խմում են և ուրիշներին էլ հիւանդացնում:

Հիւանդը պէտք է շատ զգոյշ լինի, որ ոչ ոքի չվարակի: Նա ոչ ոքի չպէտք է համուցութիւնների, իր թարախոտած շորերը, իր թաշուրի, իր թարախոտած շորերը, իր թաշուրի, չափեկը, երեսորբիչը, մանաւանդկինակը, շապիկը, երեսորբիչը, մանաւանդկինակը, կապերը առանձին պէտք է պահի ու չոկ լուսնայ: Նա գէս ու գէն չպէտք է թքի և ոչ իր բերանի բանը (օր. ծխախոտը, թքի և ոչ իր բերանի բանը) ուղայլանը, կծած թիքան, կծած միրգը) ուշ րիշին տայց: Բերանի ծխախոտը չպէտք է ոչ կետին գցի, որովհետեւ երեխանները կանուգ են բերաններն առնել ու վարակուել: Աւելորդ է ասել, որ մինչեւ լաւ առողջաւ Աւելորդ է ասել, որ մինչեւ լաւ առողջաւ

նալը, նա իրաւունք չունի իր կնոջը մօտենալ. նրա անկողինը պէտք է առանձին լինի:

### Է. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Առհասարակ մարդիկ բժշկի են դիմում այն ժամանակ միայն, երբ ցաւեր ունեն կամ երբ մի մեծ խոց և ուռուցք է դուրս գալիս նրանց մարմնի վրա:

Բայց այդպէս չպէտք է անել, թէ չէ հիւանդութիւնը կհնանայ:

Ընդհակառակը, հէնց որ մի կասկածելի բան տեսնէք ձեզ վրա, իսկոյն բժշկի գնացէք: Փառք Աստծու, այժմ ամեն տեղ բժիշկ կայ: Գնացէք, ցայց տուէք ձեզ: Թէ կասի ոչինչ չկայ, կհանդստանաք, կասի սիֆիլիս է, կրծշկուէք:

Կան մարդիկ, որոնք սարսափելի յուսահատութեան մէջ են սարսափելի յուսիմանում են, որ վատ ցաւ բնինում, երբ որ ծում են թէ կորած են, են ընկել. կար բայց այդ սիսալ է: Էլ չեն լաւանայ:

Սիմֆիլիսը բուժելի էաւ բժշկուեցէք ու էլի հիւանդութիւն է: կդառնաք:

Միայն մի բան. պիտի անպատճառ բժիշկը ձեզ բժշկի եւ ո՛չ թէ զանազան մօլլաներ, հէֆիմ-դալլաքներ ու պառաւներ: Միայն բժիշկն է հասկանում, թէ ինչ է սիֆիլիսը, միայն նա է հասկանում կանոնաւոր բժշկութիւնը:

Վաս ցաւը ոչ ո՛, բացի իսկական բժշկից, չի կարող բժշկել:

Ի՞նչի՞ւ:

Ամենքը տեսած են մեծ մեքենաներ, որոնց մէջ հարիւր տեսակ երկաթներ, օզգեր, անիւներ, վինտեր, մեխեր կան: Ասենք թէ այդ մեքենան փչացել է, ել չի բանում, ու կանչում են մի մարդու, որը իսկի հասկացողութիւն չունի գրա մասին: Կարող է նա իմանալ, թէ ինչպէս պէտք է դրստել, որ վինտն է փչացած, որ անիւն է կոտրած: Ի հարկէ ոչ: Ամեն մարդ հօ չի կարող ժամացոյց ուղղել: Մարդուս մարմինն էլ մի շատ բարդ մեքենաց է: Բժիշկները 6—7 տարի քննում-զնում են այդ մեքենան, հարիւրաւոր գրքեր են կարդում դրա մասին ու հազիւ են հասկանում: Ի՞նչ կարող են հասկանալ պառաւ կանայք, կամ տղէտ դալլաքները, որոնք իսկի կարդալ էլ չգիտեն: Ասենք, նրանք իրանց պապերից լսել

են, թէ սիմիլիսի դեղը մնդիկն է. բայց թէ  
ինչ ձեւի պէտք է լինի մոդիկը, ինչ ժամա-  
նակ պէտք է տալ նրան. ինչ չափով. քանի  
ժամանակ, երբ պէտք է Շաղարեցնել և  
այլն. Այդ բաները նրանք չգիտեն ու իրանց  
դեղերով աւելի վնասում են հիւանդին, քան  
օդուտ հասցնում:

Նրանք առհասարակ ամենքին մուխ են  
տալիս և այդ ձեռով այնքան մնշիկ են մտցնում  
հիւանդի մարմնի մէջ, որ խեղճի խղերը  
ուռչում է, բերնի մէջ խոցեր ու վէրքեր  
են դուրս գալիս, թուքը ծորում է բերանից,  
հիւանդը սաստիկ լուծ է լշնկնում և ու-  
ժասպառ լինում: Նա առեմնում է, որ  
դրութիւնը վատացել է ու միայն այն ժա-  
մանակ է դիմում խկական միայն այն ժա-  
դէն ուշ է լինում և դժուար է դժուար է լինում օդ-  
ուել խեղճին:

Այդ դեռ ոչինչ:

Լինում են և այնպիսի՝ դէպքեր, որ  
պառաւների դեղերից մարդիկ քունառ-  
մեռնում:

Առաջուայ ժամանակները դեռ բժիշկ-  
ներ չկային և ժողովուրդն դեռ բժիշկ-  
ների ու պառաւների վրա եր յոյսը մօլլա-  
գու դրած: Բայց

հիմի տէրութիւնը համարեան ամեն տեղ  
բժիշկներ է նշանակել, հիւանդանոցներ  
հիմնել: Եթէ գիւղումը բժիշկ չկայ, դժուար  
բան չէ մօտիկ քաղաք գնալ, բժշկն տես-  
նել: Այժմ ամեն աղքատ կարող է ձրի  
բժշկուել, նոյն իսկ ձրի դեղեր ստանալ: Թոնդ  
ուրեմն ամեն հիւանդ բժշկի գիմի.—Բժիշ-  
կը խղճով կվերաբերուի դէպի աղքատը, կը  
խնամի, կառողացնի նրան ու չի թողնի, որ  
կորչի և իր հետ ընտանիքն էլ կորցնի:

Բժշկուելու համար, ի հարկէ, ամենից  
լաւն այն է, որ հիւանդը հիւանդանոցում  
պառկի: Բայց ամեն տեղ հիւանդանոց չը-  
կայ, յետոյ սիֆիլիսը այնպիսի հիւանդու-  
թիւն է, որ ոտի վրա էլ կարող է բժշկուել  
միայն հարկաւոր է, որ հիւանդը ճշտու-  
թեամբ կատարի բժշկի հրամանները:

Ով որ ուզում է բժշկուել վատ ցաւից,  
նա պիտի մրսելուց պահպանի իրան: Եթէ  
բերանի կամ բգի մէջ խոցեր կան, նա չը-  
պէտք է խմի ու ուտի ոչ շատ սառ, ոչ շատ  
տաք բան, պէտք է ծխելն էլ թողնի:

Նա պիտի մաքուր պահի իրան: Վրան  
խոցերն ու ջրջրուկները պէտք է լուսանայ գոլ  
ջրով օրական գոնէ երեք անգամ և վրան

բժշկի տուած փոշիները ցանի: Այն շորերն ու կապոցները, որոնցով կապում են սիֆիլիսի խոցերը, պէտք է շուտ-շուտ լուանալ: Առհասարակ քանի մաքուր պահուեն այս խոցերը և ջրջրուկները, այնքան շուտ կլաւանան:

Հիւանդը չպէտք է խմիչքներ, արագդինի խմի, որովհետեւ արբեցողներին սիֆիլիսը աւելի է զնասում և խմողը աւելի դժուարութեամբ է առողջանում:

Նրա մնունդը (ուտելիքը) պէտք է լաւ լինի, նա շատ չպէտք է յօդնեցնի իրան աշխատանքով, այլ ընդհակառակը պէտք է աշխատի կազդուրուելու, որ կարողանայ հիւանդութեանը յաղթել:

Չի կարելի բժշկութիւնը թողնել, քանի որ բժիշկը չի ասել, թէ բաւական է:

Պէտք է գիտենաք, որ այդ հիւանդութիւնը մի երկու շաբաթուայ մէջ չի վերջանայ: Երբեմն շատ տարիներից յետոյ էլ նորից մի բան է դուրս գալիս:

Սիթիլիս ունեցողը երկար ժամանակ պէտք է բժշկովի, այն է. 5—6 տարի:

Առհասարակ հիւանդը այն ժամանակ միայն կարող է իրան առողջ համարել, երբ որ

երկու-երեք տարի շարունակ այլ եւս ոչ մի նշան չի երեւացել վրան: Թէ չէ շատերը հիւանդանում են մի քանի անգամ, բժշկի մօտ են գնում ու, հէնց որ վրաների վէրքերն ու խոցերը լաւանում են, էլ երկար չեն մտածում—պսակւում են:

Եւ գիտէք ինչ է պատահում:

Այն, որ մի երկու ամիս հազիւ անցած, յանկարծ կնոջ վրա սկսում են երկալ վատ ցաւի նշանները: Այդ նշանակում է, որ մարդը լաւ չէր առողջացած, նրա մէջ դեռ մնացած էր սիֆիլիսի թոյնը: Ո՞րչափ անտանելի կդառնայ այն ժամանակ այդ խեղճ մարդու դրութիւնը: Ի՞նչ կասեն նրա կինն ու ազգականները: Ի՞նչպէս կդջայ նա, որ պսակուելուց առաջ բժշկից խորհուրդ չէր հարցրել:

Հիմի էլ գեռ այնպիսի տիսմար մարդիկ կան, որոնք բժշկում են զանազան հէքիմների ու պատաւաների մօտ և յօյս ունեն, թէ կաւանան: Մինչև անգամ կարծում են, թէ գրանք բժշկիներից աւելի շուտ կլաւացնեն: Ասում են. «այ, հրէն, այս ինչին պառաւը մուխ տուեց, խոկոյն առողջայաւ, էլ ոչինչ չի երեւում վրան»: Բայց այս ասողն էլ չի իմանում, որ այդպէս շուտ լաւացողը

եսկի սիֆելիս չի ունեցել, այլ ուրիշ թեթևան, այնպիսի բան, որը ինքն իրան էլ կը լաւանար: Պառաւը կամ չէ հասկացել, կամ թէ չէ խարել է:

### Է. ԵՐԲ ՍԻՖԻԼԻՍՈՑ ԿԱՐՈՂ Է ԱՄՈՒՋ- ՆԱՆԱԼ

Սա մի շատ կարեոր խնդիր է:  
Ամենից առաջ, վատ ցաւ ունեցողը

չպէտք է պսակուի առանց բժշկի խորհրդի, որովհետեւ միայն բժիշկը կարող է խմանալ, թէ նա բոլորովին առողջացած է, թէ ոչ: Հիմի տեսնենք, թէ ինչ է պատահում երբ որ վատ ցաւի տէրը, չառողջացած, կին է ուզում:

Ամենից առաջ, ի հարկէ, վարակւում է կինը, հիւանդանում ու երկար տարիներ կրում այն տանշանքները, ինչ որ կրել էր ինքը հիւանդը: Խեղճ կինը կորցնում է իր թարմութիւնը, չահէլութիւնն ու գեղեցկութիւնը, նիհարում է, քիթը պճում ու դէմքն այլանդակւում:

Բայց այս բոլորը չէ:

Նա չբեր է մնում, կամ անցուցներ

է անում (վիժում է), կամ մեռած երեխաներ ծնում: Իսկ եթէ երեխան կենդանի էլ է ծնում, հիւանդոս է լինում ու ուտով մեռնում է, կամ եթէ ապրում էլ է, ապիկար է մնում իրանց ամբողջ կեանքում ու անընդհատ զգում են իրանց մէջ ժառանգական անողորմ ախտի հետքերը:

Այս գրքոյկի երկրորդ մասում մանրամասը կիսուենք ժառանգական սիմիլիսի մասին, իսկ առայժմ ընթերցողը թող լաւ հասկանայ, որ—

Վատ ցաւ ունեցողը երբէք չպէտք է ամուսնանայ առանց բժշկի խորհրդի, քեկուզ բոլորովին էլ բժշկուած համարի իրան, քեկուզ մի քանի տարի էլ բոլորովին առողջ եղած լինի:

Ահա թէ ինչ սարսափելի ախտ է սիփիլիսը: Իզուր չէ ուրեմն, որ նրան ՎԱՏ ՑԱԽ անունն են տուել:

Նատ տանշանքներ է հասցնում նա հիւանդին և շատ ընտանիքներ անբազդացնում:

Սիփիլիսով հիւանդանալը ոչ ամօթ է և ոչ յանցանք, բայց ամօթ ու յանցանք է

ՀՔԺՀԿՈՒԵԼ ու իրան կորցնել։ Աւելի ևս մեծ յանցանք է պսակուել ու անբաղդացնել անմեղ աղջկան և նրանից ծնած երեխաներին։

Թաղ կանոնաւոր կերպով ու երկար ժամանակ բժշկուի վատ ցաւ ստացողը և նա կառողջանայ ու կարող կլինի ամուսնանալ եւ առողջ ընտանիք ունենալ։

Վերջ առաջին մասի։



«Ազգային գրադարան



NL0271714

«ԱՌՈՂՋԱԼՊԱՀԻԿ ԹԵՐԹ»

Կիսամուեա նկարազարդ հանդէս 4—6 նոյնպէս  
նկարազարդ գրքոյկներով.  
Տարեկան բաժանորդագինն է . 2 ռ. . 50 կ.  
Արտասահմանում . . . . 10 ֆր. կամ 4 ռ.  
Հասցէն. Տիֆլիս, редакція „Արօղճառակъ  
Тертъ“.

Արտասահմանում. Tiflis, Redaction «Arrogdjarahik Tert»

Գր. Վ. Արծրունու հրատարակութիւնները.

- 1) Ժանտախտ (մի քանի օրինակ միայն) 20 կ.,
  - 2) Խոլերայի մասին (սպառուած), 3) Խոլերա 5 կ.,
  - 4) Հիպնոտիսմ, հատ. I. (սպառուած) 25 կ.,
  - 5) Հիպնոտիսմ, հատ. II. 15 կ., 6) Դիլրոցական առողջապահութիւն (պատկերազարդ) 50 կ.
  - 7) Առողջ երեխաների խնայատարութիւն 25 կ.
  - 8) Սիֆիլիս, կակուղ շանկը, Առևտնակ 25 կ.
  - 9) Թշուառների բարեկամ բժիշկ Հոնակ 20 կ.
  - 10) Ամուսնութիւն . . . . . 75 կ.
  - 11) Աղիկ (առողջապահ. և բարոյադիտակ. էտիւդ) 60 կ.
- |   |       |
|---|-------|
| № 1. Մի' ԽՄԻՌ, երկ. տ. (նկարազարդ)                                | 5 կ.  |
| № 2. ՎԱՏ ՑԱՒ (նկ.)  | 6 կ.  |
| № 3. ՎԱՐՍԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵ-                                      |       |
| ԲԸ ԵՒ ԿՐԱՆՑ ԹՈՅՆԸ 23 նկ.  | 15 կ. |
| № 4. ԹՈՔՍ.ԽՏ ԿԱՄ ԲԱՐԱԿԱՑԱՒ.Ի (նկ.)                                | 10 կ. |
| № 5. ԴՈՂԵՐՈՅՔ ԿԱՄ ՄԾԼԱՐԻՍ. (նկ.)                                  | 5 կ.  |
| № 6. ԻՆՖՈՒԼԵՆՑԱ. ԿԱՄ ՆՈՐ ՑԱՒ.Ի (նկ.)                              | 3 կ.  |
| № 7. ՄԻ' ԺԻՄԻՐ  |       |
| № 8. ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻ-                                       |       |
| ԽԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ (նկ.)  | 5 կ.  |
| № 9. ՎԱՏ-ՑԱՒ ԿԱՄ ՄԻՓԻԼԻՌ, երկրորդ հրատարակութիւն Ա. մասն (19 նկ.) | 20 կ. |